ՍՐՏԱԳԻՆ ԽՈՍՔ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Առանձին հաճույքով հրատարակում ենք Դիտրոյտից ուխտավորաբար Մայր Աթոռ և Մայր Հայրենիք այցելած պ. Խորեն Թովմասյանի դրավոր խոսքը, կարդացված Վեհարանում, ամերիկահայ ուխտավորների անունից, Ս. Էջմիածին այցելության առթիվ։ Պ. Խ. Թովմասյանի խոսքում հստակ կերպով արտացոլվում է պանդուխտ և հավատավոր հայ մարդու և՛ Էջմիածնասիրությունը և՛ իրավ հայրենասիրությունը։— Խմբագրություն «Էջմիածին» ամսագրի։

Վեհափա՛ռ Տեր.

Փառք կուտանք Աստուծո, որ շնորհեց մեզ իրականացումը տարիներու մեր երազին ու սրտի բաղձանքին։ Ահա այսօր ունինք բախտավորությունը գտնվելու հայրենի հողին վրա, Սովետական Հայաստանի մեջ։

Գոհություն կմատուցանենք Ամենակալին, որ արժանացանք գալ Ս. Էջմիածին որպես ուխտավորներ, տեսնել այս սրբավայրերը որպես անխախտելի կոթողները մեր նախահայրերու ամուր հավատքին, և ծնկաչոք կատարել մեր ուխտը Միածնի Իջման Ս. Սեղանին առջև, աղոթել Մայր Տաճարի խնկաբույր կամարներուն ներքև, և այժմ արժանանալ մեր Հոգևոր Հոր՝ Զերդ Ս. Օծության շնորհաբաշխ ընդունելության։

Շատ երջանիկ ենք, որ արժանացանք այս բախտին և տեսանք մեր աչքերով հիանալի հառաջդիմությունն ու ծաղկումը Սովետական Հայաստանի գիտական, ճարտարարվեստական, կրթական և մշակութային բոլոր մարզերուն մեջ։ Ուրախ ենք և հուզված, որ կրցանք ողջունել Երևանի մեր հայ եղբայրներն ու քույրերը, որոնց ժպտուն դեմքերը և անմրցելի հյուրընկալությունը ոգևորեցին մեզ։

Մենք, դիտրոյտցի հայ ուխտավորներս, երբ ոտք կոխեցինք մեր բարգավաճող հայրենի նվիրական հողին վրա, մեր հարապատները մեծով ու պզտիկով եկան, գրկաբաց դիմավորեցին մեզ։ Պիտի չմոռնանք ցույց տրված հյուրասիրությունը և տուն պիտի վերադառնանք տանելով մեզ հետ Հայաստանեն քաղցր և անմոռանալի հիշատակներ։

Վեհափա՛ռ Տեր, թույլ տվեք ինձ, որ անարժանաբար մատուցանեմ Զերդ Ս. Օծության որդիական սերն ու երախտագիտությունը Դիտրոյտի հայության, որ պիտի չմոռնա այն պատմական այցելությունը, զոր շնորհեցիք իրեն, Ամերիկա Զերդ Սրբության անդրանիկ հովվական շնորհաբաշխ ուղևորության առթիվ։

Այն հողը, զոր օրհնեց Զերդ Ս. Օծությունը, այժմ ունի իր վրա կառուցված գեղեցիկ, արդիական ամեն դյուրություններով և 24 դասարաններով օժտված Հայ մշակութային տունը, ուր, բացի դաստիարակչական, գեղարվեստական և ընկերային հանդիպումներե, 700-ի մոտ հայ երկսեռ տղաք կստանան կրոնական ու հայկական դաստիարակություն, ըստ մեր տոհմիկ ավանդությանց։

Անցյալ Ծաղկազարդի երեկոյին դրվեցավ հիմը նոր կառուցվելիք եկեղեցվո և այժմ սկսած է շինությունը հայ ճարտարապետական գեղեցիկ ոճով։ Աստուծո օգնությամբ և Զերդ Ս. Օծության հայրական օրհնության և աղոթքներուն շնորհիվ, շինությունը պիտի ավարտի սեպտեմբերին, 1965-ին։

Մեկնելես առաջ ունեցա հանդիպում մը տիար Ալեքս Մանուկյանի հետ։ Ան պատվիրեց ինձ իր կողմեն համբուրել Զեր Ս. Աջը և խնդրել Զեր հայրական օրհնությունները, որպեսզի առանց ընկրկելու գլուխ հանեինք այս մեծ ձեռնարկը մեր Եկեղեցվո շինության, ի փառս Աստուծո և ի պարծանս Հայաստանյայց Եկեղեցվո և անոր շնորհապարգև Հայրապետին՝ Տ .Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Ներկայիս պետք եղած գումարին հարյուրին 80-ը աղդեն ապահովված է բարեպաշտ ժողովուրդի մասնակցությամբ և մեր ղեկավարներուն իշխանական նվերներով։ Տիար Մանուկյան խնդրեց նաև, որ Զերդ Ս. Օծությունը տրամադրեր մեզ 4 քարե խաչեր, դրսի պատերուն վրա զետեղվելու համար։ Ասոնք պիտի ըլլային նվիրական զարդեր մեր Եկեղեցվո շենքին վրա՝ ղրկված Ս. Էջմիածնեն։

Կմաղթեմ Զերդ Ս. Օծության արևշատություն և Ս. Էջմիածնի նախամեծար Աթոռին, Հայաստանյայց Ս. Եկեղեցվո հաստատություն, նաև Մայր Հայրենիքին մշտական ծաղկում և բարգավաճում՝ խաղաղությամբ օրհնված Սովետական հզոր Միության մեջ։

Որդիական ակնածանքով՝
Խորեն Թովմասյան

Դիտրոյտ, Միչիգան, ԱՄՆ։